


11070

Ա. ՊՐՈՆԻՎԱՏԻՆՈՎ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ
ՇԵՖԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

★



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ



1933



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շեֆական աշխատանքի հարցերը գրեթե մշակված չեն: Ձկան մեթոդական մշակումներ, չկա մեթոդական գրականություն: Միայն «Вожатый» ժուրնալում յերբեմն յերևում է փոքրիկ հոդվածներ: Լրացուցիչ նյութերի բացակայությունն անկասկած դժվարացնում է այս հարցի մշակումը:

Հարցի մշակմանը հարող ե ոգնել կոլեկտիվի և դպրոցի փորձը: Նայելով թե ինչ է կատարված չեֆական աշխատանքի աստիճանում: Համեմատել այդ աշխատանքը դասում Գանձնարարվածի հետ: Դասից և պրակտիկայից ընտրել այն ամենը, վերջ կարող է բարելավել չեֆական աշխատանքը: Կազմել այդ ընտրություն ուրվագիծը և քննել քո կոլեկտիվի ակտիվի հետ միասին: Ակտիվը քննելով այն հարցը, թե ինչպես պետք է տանել չեֆական աշխատանքը, քեզ նոր նյութեր կտա, վերջինք կոգնեն գործի ճիշտ կազմակերպմանը:



38142-62

ՇԵՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քաղաքը՝ արդյունաբերական պրոլետարական կենտրոնը խաղացել և խաղում է առաջատար դեր գյուղի տնտեսական և կուլտուրական շինարարություն մեջ:

Որ-որի ծավալվում է քաղաքի պրոլետարական հասարակայնություն մասսայական շարժումը՝ ոգնելու գյուղի սոցիալիստական վերակառուցմանը: Շեֆությունն առանձին գյուղերի, չնշանների, նույնիսկ մարզերի վրա, կոլտնտեսությունների մրցումն արտադրություն հետ, բանվորական բրիգադները, մասնագետների, վորակյալ բանվորների ուղարկումը տնտեսություն առանձին ճյուղերը կազմակերպելու և կանոնավորելու համար, տրակտորների գնումը, նորմայից ավելի գյուղատնտեսական մեքենաների արտադրումը գործարանների կողմից և այլ ձեռնարկումներն աչքի առաջ ունեն գյուղատնտեսություն սոցիալիստական վերակառուցումը:

Պիոներական կոլեկտիվները, դպրոցները, քաղաքի անկազմակերպ յերեխաների մասսաները չեյին կարող հեռու մնալ այդ շարժումից:

Քաղաքի պիոներական կոլեկտիվները, դպրոցները՝ ուղարկում են իրենց բրիգադներն ոգնելու

գյուղական կոլեկտիվները և դպրոցների աշխատանքին: Քաղաքներում պիոներների նախաձեռնությամբ միջոցներ են հավաքվում տրակտորների, գրականության համար, դուրս են գրում թերթեր, ժուրնալներ, հավաքում են մատիտներ, տետրակներ, դասագրքերը յենթաշեփ գյուղերի համար:

Կարելի՞ չէ ասել արդյոք, վոր շեփական աշխատանքները տարվում են սխտեմատիկ կերպով և կրում են խոր բնույթ: Դժբախտաբար, այդ չի կարելի ասել բոլոր տեղերի մասին:

Շեփական աշխատանքը շատ տեղերում կրում է չափազանց մակերեսային բնույթ: Հաճախ, կատարելով մեծ աշխատանք գյուղական պիոներ կոլեկտիվին դործնական ոգնություն ցույց տալու տեսակետից, քաղաքային պիոներները չեն գիտակցում այդ աշխատանքի ամբողջ իմաստը և նշանակությունը: Բրիգադ ուղարկելը, տրակտորի համար միջոցներ հավաքելը կամ մի վորևէ այլ ձեռնարկում անցնում են վորպես պատահական եպիզոդ կոլեկտիվի կյանքում իր յետևից չթողնելով վորևէ քիչ թե շատ նկատելի հետք: Քաղաքային կոլեկտիվները չեն հետևում գյուղի կյանքին, հաճախ չգիտեն, ինչ է կատարվում այնտեղ: Այդպես շարունակել չի կարելի: Շեփական աշխատանքը պետք է դադարի քաղաքային պիոներական կոլեկտիվների կյանքում «պատահականություն» լինելուց, նա պետք է դառնա սխտեմատիկ, խոր աշխատանք, վորը դաստիարակում է կամք և ցանկություն ամրապնդելու բանվոր դասակարգի դաշինքն աշխատավոր գյուղացիության հետ:

Ներդրավելով քաղաքային պիոներներին, իսկ նրանց միջոցով աշխատավորների բոլոր յերեխաներին քաղաքի և գյուղի դաշինքի ամրապնդման գործին մասնակցելու, մենք պետք է ցույց տանք քաղաքի առաջնորդող դերը, աշխատենք, վորպես զի յերեխաներն ըմբռնեն պրոլետարիատի դեկավար դերը գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում:

Կապ պահպանելով գյուղի հետ, մենք պետք է քաղաքի յերեխաներին ցույց տանք գյուղի դեմքը, նրա զարգացման ուղիները և վերջնական նպատակը, ուղղելով քաղաքային կոլեկտիվները և դպրոցների շեփական աշխատանքը, ոգնելու գյուղատնտեսություն սոցիալիստական վերակառուցմանը և կուլտուրական շինարարությունը: Մենք պետք է յերեխաների մեջ դաստիարակենք ցանկություն ամրացնելու կապը գյուղի հետ, կոնկրետ ոգնություն ցույց տալով նրան սոցիալիստական վերակառուցմանը:

Քաղաքի պիոներները և դպրոցականները շատ ավելի զարգացած են, քան գյուղի պիոներները և դպրոցականները: Նրանք պետք է ոգնեն գյուղի յերեխաներին լայնացնելու իրենց մտավոր հորիզոնը, պետք է ոգնեն նրանց ըմբռնելու ժամանակակից կյանքը, պետք է ոգնեն նրանց կազմակերպել և մասնակցել գյուղի սոցիալիստական վերակառուցմանը:

Շեփության գործնական աշխատանքի դիրքավորումն այս պետք է լինի: Այդ նշանակում է, վոր բոլոր ձեռնարկումների գլխավոր նպատակը լինե-

լու յե վոչ թե գյուղական պիտներնրի սպասարկումը, այլ ամենից առաջ ոգնել նրանց կազմակերպելու իրենց աշխատանքը:

Շեֆական աշխատանքի այս յերեք խնդիրներն իրագործումը պահանջում է վճռական կերպով վերակառուցել քաղաքային պիտներնրի շեֆական աշխատանքը:

ՊԵՏՔ Ե ԶԱՆԱԶԵԼ ԳՅՈՒՂԸ

Շեֆական աշխատանքը կարող է լայն ծավալ ստանալ այն ժամանակ, յերբ քաղաքային կոլեկտիվը տեղյակ կլինի, ինչ է կատարվում գյուղում: Նա պետք է իրազեկ լինի բոլոր ձեռնարկումներին, բոլոր փոփոխություններին—քաղաքական, տնտեսական, կուլտուրական և այլն,—վորտնք տեղի յեն ունենում գյուղում և վոչ միայն յենթաշեֆ գյուղում, այլ ամբողջ գյուղատնտեսություն մեջ, յենթաշեֆ գյուղը ծառայում է միայն վորպես որինակ:

Ուրեմն ինչպե՞ս անել, վոր քաղաքային կոլեկտիվը ճանաչի գյուղը:

Քննենք այդ աշխատանքի մի շարք յեղանակները:

Յենթաշեֆ գյուղին ծանոթանալու համար պետք է կազմակերպել կոլեկտիվի ներկայացուցիչների մի խմբի մեկնումը դեպի այդ գյուղը—հետախուզության: Հետախույզ խումբը յենթաշեֆ գյուղում պետք է ապրի մոտ մեկ շաբաթ: Հետախույզության նպատակն է—կատարել գյուղի ման-

րամասն բնութագրումը, կապել առաջին հանգույցը շեֆարկյալների հետ: Հետախույզ խումբը պետք է ծանոթանա գյուղի դրությանը, կոլտնտեսության աշխատանքներին, քա՞նի տնտեսություն են ընդգրկված կոլտնտեսության մեջ, ի՞նչ տնտեսություններ են, անհատական տնտեսությունների թիվը, քա՞նի կուլակային տնտեսություն կա գյուղում և այլն: Ծանոթանալով շեֆարկյալ գյուղի կաղությանը, կպարզվի թե սոցիալական ինչ շրջապատում է աշխատելու պիտներական կոլեկտիվը:

Հետախույզությունը պետք է պարզի, ինչպես է դրված աշխատանքը յերեխաների մեջ, կա՞րդյոք պիտներական կոլեկտիվ, յե՞րբ է կազմակերպվել, ի՞նչ է անում այժմ պիտներկոլեկտիվը, ի՞նչ դրության մեջ է գտնվում, ծանոթանա դպրոցի դրությանը, աշակերտների սոցիալական կազմին, վերակառուցվե՞լ է դպրոցը նոր խնդիրների համապատասխան, քա՞նի հոգի յե ընդգրկել պիտներական կոլեկտիվը, դպրոցը, վո՞րքան անկազմակերպ յերեխաներ կան դեռ:

Պիտներ կոլեկտիվի, դպրոցի հետ ծանոթանալուց հետո հետախույզ խմբակը պետք է իմանա, թե ի՞նչ են անում յերեխաները դպրոցից և կոլեկտիվից ազատ ժամանակը: Քա՞նի յերեխա աշխատում են վարձով, ինչպե՞ս են անում յերեխաները կոլտնտեսություն և անհատական տնտեսություն մեջ: Հետախույզ խումբը պետք է իմանա, ինչ են կարդում յերեխաները, ինչո՞վ են զբաղված իրենց ազատ ժամանակը:

Հետախույզ խումբը պետք է իմանա, ինչ կազ-

մակերպություններ կան գյուղում—կուսակցական, կոմեյրիտական բջիջներ, կամ գուցե առանձին կուսակցականներ և կոմեյրիտականներ, ի՛նչ հասարակական կազմակերպություններ կան գյուղում (կոոպերացիա, կամավոր ընկերություններ), կուլտուրական հիմնարկներ (խրճիթ-ընթերցարան, կարմիր անկյուն, չափահասների դպրոց, լիկկայան) :

Հետախույզ խումբը պետք է պարզի, թե գյուղ-խորհուրդը, էությունաբարձր, կոոպերացիան, վարկային ընկերությունն ինչպե՛ս են ոգնում պիոներական կուլեկտիվին, դպրոցին, ինչ ձեռնարկումներ են անցկացնում, կամ ծրագրում են անցկացնել յերեսխաների համար, կոմեյրիտական, կուսակցական բջիջներն ինչպե՛ս են ղեկավարում պիոներական կուլեկտիվը, ինչպես է նրանց ազդեցությունը դպրոցի վրա :

Մեծ սխալ կլինի, յեթե հետախույզ խումբը չոր պաշտոնական ձևով վերաբերվի շեֆարկյալ գյուղի դրությունը պարզելու գործին : Նրա աշխատանքում անպետք են այնպիսի մեթոդներ, ինչպես անկետանները, ատուգատեսը տներում, ծանոթանալու ժամանակ բրկնոտում նշանակելը և հետախուզության այլ ձևերը :

Հետախույզ խումբը իրեն հետաքրքրող ամեն ինչ պետք է իմանա բնկերական գրույցներից, շեֆարկյալ գյուղի յերեսխաների հետ ապրելով և նրանց հետ միասին աշխատելով :

Հետախույզ խումբը չպետք է գյուղ պնա «դատարկ ձեռներով» : Յեթե նա գնում է ծանոթանալու

շեֆարկյալ գյուղի հետ, ապա նա պետք է գյուղի յերեսխաներին ծանոթացնի քաղաքի, իր կուլեկտիվի, դպրոցի, գործարանի հետ : Հետախույզ խումբն իր հետ պետք է տանի նյութեր փոքր ցուցահանդեսի համար, վորը ցույց է տալու շեֆի դեմքը :

Հետախույզ խումբն իր հետ պետք է վերցնի նաև նյութեր շեֆարկյալների հետ միասին պատի թերթ լույս ընծայելու համար, ցանկալի յե, վոր նա աշխատի տանել իր հետ ռադիոընդունիչ, գրականություն, խաղի պարագաներ և այլն :

Ցուցահանդեսը, միասին պատի թերթ լույս ընծայելը, ռադիո սարքելը, շեֆարկյալ յերեսխաների հետ խաղեր կազմակերպելը—այս ամենը կոգնի հետախույզ խմբին շուտով մտածելու իր շեֆարկյալների հետ, ամրապնդելու կապը :

Հետախուզության մասին նախորոք պետք է պայմանավորվել գյուղի պիոներական կուլեկտիվի կամ դպրոցի հետ :

Յեթե հնարավոր է, հետախույզ խումբը քաղաք վերադառնալիս իր հետ պետք է տանի շեֆարկյալ յերեսխաների ներկայացուցիչներին, վորպես զի նրանք ծանոթանան իրենց շեֆի հետ :

Վերադառնալուց հետո հետախույզ խումբը պեկուցում է կուլեկտիվի հավաքում և ողակների հետ միասին մշակում է նյութերը, կազմակերպելով «շեֆարկյալ գյուղը» անկյունը :

Հետախուզությունը սկզբնական քայլն է գյուղի հետ ծանոթանալու սխտեմատիկ աշխատանքում :

Կուլեկտիվում, դպրոցում պետք է կազմակեր-

պել մշտական ինֆորմացիա գյուղի մասին: Դրա համար կարելի չէ ոգտագործել ինֆորմացիայի հետեյալ յեղանակները:

ԱՆԿՅՈՒՆ ՊԱՏԻ ԹԵՐԹՈՒՄ

Այս անկյունում լուսաբանվում է գյուղի դրու-
թյունը, չեֆարկյալ կոլեկտիվի, դպրոցի աշխա-
տանքը, քաղաքային կոլեկտիվի, դպրոցի չեֆա-
կան աշխատանքը: Անկյունում զետեղվում են բո-
լոր գյուղ գնացողների թղթակցութունները, չե-
ֆարկյալների նամակները և նրանց ուղարկված
նամակները:

Պետք է պայմանավորվել չեֆարկյալ գյուղի
պատկերների հետ, վորպեսզի նրանք կանոնավոր
կերպով գրեն թերթին:

Գյուղ մեկնողների հաշվետվությունը,
ինֆորմացիա գյուղի դրության մասին

Գալիս է բրիգադը, կամ առանձին յերեխաներ,
վորոնք յեղել են գյուղում, — նրանք պարտավոր են
մանրամասն զեկուցում տալ գյուղի դրության մա-
սին կոլեկտիվի հավաքում, դպրոցական ժողովում:

Գալիս է չեֆարկյալ կոլեկտիվի ներկայացու-
ցիչը, կամ նամակ է ստացել այնտեղից, — այդ մա-
սին իսկույն պետք է հաղորդել պիոներների բոլոր
հավաքներում և դպրոցի խմբակներում:

Զեկուցումներ, ինֆորմացիա գյուղի մասին
պետք է անել վոչ միայն չեֆարկյալ գյուղի վերա-
բերմամբ, պետք է նրա նյութերն ոգտագործել

լուսաբանելու համար գյուղի ընդհանուր դրու-
թյունը և կուսակցության քաղաքականությունը
գյուղում:

Պետք է անպայման յերեխաների հետ միասին
ֆննարկել այնպիսի հարցեր, ինչպես ցանֆի և բեր-
ֆահավաֆի կամպանիան, կոլեկտիվացման ընթաց-
քը, հացամթերումները, գյուղմիասնարկը, կո-
տնտեսությունների տրված արտոնությունները
և այլն:

ՇԵՑԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ

Ինչպես ասացինք, յուրաքանչյուր կոլեկտիվ
կամ դպրոց պետք է ունենա «մեր չեֆարկյալ գյու-
ղը» անկյունը: Այդ անկյունը պետք է կազմակեր-
պել կոլեկտիվի, դպրոցի չենքում, բանվորական
ակումբում կամ կարմիր անկյունում:

Անկյունը պետք է պատկերացնի չեֆարկյալ
գյուղի դեմքը, ցույց տա այն բոլոր փոփոխու-
թյունները, վորոնք տեղի յեն ունենում գյուղի
տնտեսական, կուլտուրական կյանքում: Անհրա-
թեշտ է լալ ձևավորել անկյան բովանդակությու-
նը: Յեթե անկյունում լինեն միայն պլակատներ
և լոզունգներ — նա հետքերքեր չի լինի: Պետք է
այնպես անել, վոր նպ ուղադրություն դրավի,
ցայտուն և հասկանալի ձևով լուսաբանի, ի՛նչ է
և կատարվում գյուղում:

Կարելի չէ գծադրել չեֆարկյալ գյուղը: Պայ-
մանական նշաններով ցույց տալ պիոներական կո-
լեկտիվների ցանցը, կոլտնտեսությունները, խորհ-

տնտեսությունները, չքավոր և միջակ անհատական տնտեսությունները, կուլակային տնտեսությունները, ինչպիսի՝ կուլտուրական հիմնարկներ կան—խրճիթ—ընթերցարաններ, կարմիր անկյուններ, դպրոցներ, ռազիո բարձրախոսներ, լիկկայաններ, շրջիկ կիներերի մարչրուտը և այլն:

Պատկերավոր դիադրամներով կարելի չե ցույց տալ դյուղի բնութագրության տարբեր մոմենտները, որինակ—ավաղով լի մի արկղ, բաժանելով տարբեր մասերի (չաղ տալ բամբակ, ցորեն, դարի և այլ տեխնիկական մշակույթներ ու հացահատիկներ), կարող ե ցույց տալ ցանքի չափը, վո՛րժան պետք ե լիներ ըստ պլանի, վորքան ե ցանված, ո՞վ ե ցանել, ինչպիսի կուլտուրաներ են:

Փոքրիկ պատկերից կազմված դիադրամով կարելի չե ցույց տալ հավաքված բերքի չափը:

Անկյունում պետք ե լինեն դյուղը պատկերացնող մակետներ: Որինակ, դպրոցի, խրճիթ—ընթերցարանի, կոոպերատիվի մակետը: Կավից ծեփած կամ նկատված մակետներով կարելի չե ցույց տալ դյուղի առանձին բնորոշ մոմենտները: Որինակ, յերեխաները ինչպե՛ս են անցկացնում իրենց հանգըստի ժամերը—խաղի կամ ընթերցանության մակետները, ո՞ւմ դեմ պետք ե պայքարել—կուլակի, տերտերի, դաշտային վնասատուների և այլն Փիլզուրաները:

Բացի պլակատներից, դիադրամներից և մակետներից անկյունում պետք ե լինեն քաղվածքներ թերթերից, ժուրնալներից դյուղի մասին, նամակներ դյուղից, դյուղ գնացողների հաշվետվություն-

ները, պատի թերթը և այլ նյութեր, վորոնք բնութագրում են դյուղի դրությունը և կոլեկտիվի, դպրոցի շեփական աշխատանքը:

Անկյունի վրա հսկելու և նոր նյութեր հավաքելու համար նրան պետք ե ամրացնել պիոներական մի ողակի: Յեթե անկյունը դպրոցումն ե, նրան ամրացվում ե խմբակներից մեկը:

Բացատրական աշխատանքի համար պետք ե ոգտագործել այն թերթերի, ժուրնալների, բրուշյուրների ընթերցումը, վորոնց մեջ լուսաբանվում են դյուղական հարցերը: Պետք ե կազմակերպել հարց ու պատասխանի յերեկոներ, վիկտորինա, տեղեկատու սեղաններ, խմբական և անհատական զրույցներ յերեխաների: Հետ հատկապես ընկեր Ստալինի՝ դյուղի մասին արտասանած ճառի մասին:

Ահա մոտավորապես այն ձեռնարկումները, վորոնց միջոցով կարելի չե սխտեմատիկ աշխատանք ծավալել քաղաքի յերեխաներին դյուղի հետ ծանոթացնելու ասպարեզում:

ՇԵՖԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Շեփական աշխատանքը յերբեք չպետք ե կրի ընդհանուր բնույթ: Շեփության մեջ կարևոր են վոչ թե ընդհանուր խոսքերը—վողջույնները, ընկերական խոստումները և այլն, այլ կոնկրետ գործեր, վորոնք ոգնում են դյուղական պիոներ կոլեկտիվների և դպրոցների աշխատանքին: Քաղաքի և դյուղի յերեխաների կապը կամրանա միայն նրանց

Համագործակցութեան հիման վրա, միայն այն ծա-
մանակ, յերբ գյուղի յերեսաները կղզան քաղաքի
ոգնութիւնը, աշակցութիւնը:

Շէֆական աշխատանքը պայմանական կերպով
կարելի չէ բաժանել յերեք մասի:

1. Ոգնութիւն պիտոյնրական կոլեկտիվի և
դպրոցի աշխատանքի կազմակերպմանը:

2. Ոգնութիւն կոլեկտիվին, դպրոցին գրա-
կանութեամբ, նյութերով, գործիքներով և այլ
ձեռնարկումներով (եքսկուրսիա դեպի քաղաք,
չրջիկ կինո—ռադիո, գեղարվեստական բեմա-
դրութիւններ և այլն):

3. Ոգնութիւն գյուղի տնտեսական և կուլտու-
րական շինարարութեանը (տրակտորի համար մի-
ջոցներ համալրելը, կոլտնտեսութեան համար ին-
վենտար, մեքենաներ գնելը, լիկէյաւանի կազմա-
կերպումը և այլն):

Տեսնենք, թե ինչ կարելի չէ անել շէֆական
աշխատանքի այս տարբեր մասերում:

Վո՞րն է հիմնականը գյուղական պիտոյնր կո-
լեկտիվի և դպրոցի աշխատանքում:

Գյուղական կոլեկտիվի և դպրոցի աշխատան-
քի հիմնական խնդիրներն են.

Պիտոյնրների, դպրոցականների և անկազմա-
կերպ յերեսաների ներգրավումը գյուղի հասարա-
կական կյանքում—մասնակցելու գյուղի սոցիա-
լիստական վերակառուցմանը (տնտեսական և կուլ-
տուրական շինարարութիւն):

Պայքար իսկական պոլիտեխնիկական դպրոցի,

ընդհանուր պարտադիր ուսուցման, դպրոցական
ցանցի լայնացման համար:

Կուլտուրական—մասսայական աշխատանքի ծա-
վալումը գյուղի յերեսաների մասսայում:

Աշխատանքի այս հիմնական բնագավառները
պետք է վորոշեն քաղաքի պիտոյնրների և դպրոցա-
կանների շէֆական աշխատանքի բնույթը տվյալ
բնագավառում:

Ոգնութիւն ցույց տալու լավագույն ձևն ալ-
տիվ ուղարկելն է: Այստեղ պետք է ամբողջապես
ոգտագործել բրիգադներ ուղարկելու փորձը:

Մանկական բրիգադների փորձը սովորեցնում
է յերկու բան. առաջին, չի կարելի բրիգադ ուղար-
կել «ընդհանրապես» ոգնելու և յերկրորդ, չի կա-
րելի գյուղ գնալ միայն սպասարկելու յերեսանե-
րին, աշխատելու նրանց փոխարեն:

Բրիգադներ պետք է ուղարկել վորոշ կոնկրետ
աշխատանքի համար:

Որինակ—եքսկուրսիաներ կազմակերպողների
բրիգադ, ընդհանուր պարտադիր ուսման նախա-
պատրաստման բրիգադ և այլն, և այլն:

Բոլոր բրիգադների համար բնորոշ պետք է լի-
նի այն, վոր նրանք լինելու յեն աշխատանքի կազ-
մակերպողների բրիգադներ: Նման բրիգադներ վոչ
միայն պետք է սպասարկեն յերեսաներին, այլ և
պետք է իրենցից հետո թողնեն կազմակերպված
կոնկրետ աշխատանք:

Նկատի ունենալով, վոր քաղաքի կոլեկտիվը
պետք է ողնի գյուղական կոլեկտիվի և դպրոցի
աշխատանքի գլխավոր մասերում, ապա բրիգադ-

ներ պետք է ուղարկել նախ և առաջ հետևյալ հարցերի համար:

1. Մասնակցելու տնտեսական և կուլտուրական շինարարության:

2. Դպրոցի աշխատանքի վերականգնման և բարելավման:

3. Մանկական աշխատանքի կազմակերպման:

4. Յերեխաների կուլտուրական-մասնայական աշխատանքին:

Բրիգադներ պետք է ուղարկել աշխատանքի առանձին ճյուղերի համար:

Կուլտուրական շինարարության հարցերի համար կարելի չէ այսպիսի բրիգադներ:

1. Գարնանացանի կամ աշնանացանի, բերքահավաքի կամ պահիայի ասպարեզում կուլտուրական աշխատանքը կազմակերպողների բրիգադ:

2. Կուլտորչավի կազմակերպիչների բրիգադ:

3. Ագրոմինիմումի աշխատանքի կազմակերպիչներ:

4. Ռադիո սարքավորման խումբ:

5. Գրքի տարածման կազմակերպիչներ և այլն:

Դպրոցական աշխատանքի հարցերի համար կարելի չէ հետևյալ բրիգադներ.

1. Պարտուսի նախապատրաստման կազմակերպիչներ:

2. Արհեստանոցների խարքավորման կազմակերպիչներ:

3. Ուսման մեջ յետ մնալու դեմ պայքարի կազմակերպիչներ:

4. Դպրոցական ինքնավարության կազմակերպիչներ:

5. Դպրոցական շենքի նորոգման բրիգադ:

6. Դպրոցական պիտույքների պատրաստման բրիգադ և այլն և այլն:

Մանկական աշխատանքի հարցերի համար կարելի չէ ուղարկել այսպիսի բրիգադներ.

1. Անհատական աշակերտության կազմակերպիչներ:

2. Պատանի կուլտուրիկների աշխատանքի պաշտպանության կազմակերպիչներ:

3. Կուլտուրիկ յերեխաների արտադրական բրիգադների կազմակերպիչներ:

4. Կուլտուրիկ յերեխաների արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչներ և այլն:

Կուլտուր-մասնայական աշխատանքի հարցերի համար.

1. Մանկական խորհուրդների կազմակերպիչներ:

2. Պաույսների և եքոկուրսիաների կազմակերպիչներ:

3. Մանկական հրապարակի (ամսուային և ժամուային) կազմակերպիչներ:

4. Զվարճարարների խմբերի կազմակերպիչներ:

5. Պատկերական աշխատանքի կազմակերպիչներ:

6. Մանկական գրադարան-ընթերցարանների կազմակերպիչներ և այլն:

Աշխատանքը կազմակերպել—նշանակում է.



Պարզ դնել աշխատանքի խնդիրները և նպատակները, հաշվի առնելով կոնկրետ պայմանները, Այդ խնդիրներն արագ կերպով հասցնել յուրաքանչյուր պիոներին:

Ուժերը բաժանել աշխատանքի տարբեր սակների համար:

Աշխատանքում ներգրավել դպրոցականներին և անկազմակերպ յերեխաներին:

Հետևել աշխատանքի ընթացքին, ուղղել սխալները, բացերը և առանձին խմբերի աշխատանքի նվաճումները տարածել աշխատանքի բոլոր մասերում:

Ամփոփել աշխատանքի արդյունքները, վորպեսզի մասնակցողները և հասարակութունը տեսնի այդ արդյունքները:

Աշխատանքի կազմակերպման պրոցեսում քաղաքային բրիգադը պետք է հայտաբերի գյուղի ակտիվ յերեխաներին, այսինքն այն խումբը, վորի միջոցով բրիգադը կազմակերպելու յե աշխատանքը:

Աշխատանքը կարող է հաստատուն դառնալ միայն այն դեպքում, յերբ չեֆերի բրիգադը կարողանա հայտաբերել մանկական ակտիվի խմբեր և նրանցից պատրաստել աշխատանքի կազմակերպիչներ:

Այս հիմնական պայմանների կատարումը կապահովի բրիգադի աշխատանքի հաջողութունը:

Պարտուսի նախապատրաստման կազմակերպիչների բրիգադի օրինակով տեսնենք, թե դործ-

նականում ինչպես պետք է անցկացնել աշխատանքի կազմակերպման սկզբունքները:

«Կարմիր հոկտեմբեր» դործարանին կից կոլեկտիվից մեկնեց մի բրիգադ ոգնելու Ալեքսեյեվսկի գյուղական կոլեկտիվին նրանց դպրոցում ընդհանուր պարտադիր ուսուցում անցկացնելու համար:

Գյուղին ու աշխատանքի կոնկրետ պայմաններին ծանոթանալուց հետո բրիգադը կոլեկտիվի հավաքի քննությանը դրեց իր գալու նպատակը:

— Մենք յեկել ենք ոգնելու ձեզ ընդհանուր պարտադիր ուսուցումն անցկացնելու համար:

— Ձեր քննությանն ենք դնում աշխատանքի պլանը, թե ինչպես ենք մենք մտածում կազմակերպել պարտուսի կիրառման աշխատանքը:

1. Ցուցակադրել բոլորին, վորոնք պետք է գնան դպրոցի առաջին խմբակը, և մինչև 14 տարեկան բոլոր յերեխաներին, վորոնք դպրոց չեն գնում:

2. Դպվարի և գյուղխորհրդի ներկայացուցչի հետ նշել խմբակների քանակը դպրոցում:

3. Ժողովի հավաքել բոլոր նրանց, վորոնք դպրոց պետք է գնան և նրանց հետ միասին քննել, թե ինչո՞ւ յե անհրաժեշտ ընդհանուր նախնական ուսումը և ինչպես պետք է պատրաստվել ուսումը սկսելու համար:

4. Ոգնել գյուղխորհրդին կազմելու դպրոցի սարքավորման, լուսավորության, տաքացման, գրենական պիտույքների և պարագաների, չքավոր-

ների յերեսաներին ցույց տրվելիք ոգնության (հա-
գուստ, կոշիկ) ծախսերի նախահաշիվը:

5. Կազմակերպել ուսման նախապատրաստա-
կան խմբակներ առաջին խմբակ մտնողների հա-
մար առանձին և մյուս խմբակները մտնողների հա-
մար առանձին:

Բրիգադի առաջարկած պլանի քննությունից
հետո, կոլեկտիվը պայմանավորվում է, վոր աշ-
խատանքը պետք է սկսել դպրոցական տարիքի յե-
րեսաների ցուցակազրույցից, հանձարարում է կոլ-
եկտիվին, վորոշել ցուցակազրույցի յեղանակը և
աշխատանքը բաժանել ողակների վրա:

Կոլեկտիվի խորհուրդը բրիգադի ոգնությամբ
կազմում է յերեսաների ցուցակազրույցի թեր-
թիվը, գյուղը բաժանում է մասերի և ամեն մի մա-
սին ամրացնում է մի ողակ ցուցակազրույցունը
կատարելու համար: Ողակավարներին ճիշտ հրա-
հանգներ են տրվում, թե ինչպես պետք է կատարել
հաշվառումը և բացատրել հաշվառման նպատակը:

Ցուցակազրույցունից հետո կոլեկտիվն ընտ-
րում է յերեսաների մի խումբ (3 հոգի) պլան և
նախահաշիվ կազմելու համար: Բրիգադը տալիս է
իր ներկայացուցչին խմբին ոգնելու համար:

Նախահաշիվը և պլանը կազմելուց հետո անց-
նում են յերեսաների նախապատրաստմանը:

Ողակներն սկսում են կազմակերպել ուսման
նախապատրաստական խմբակներ, պատրաստում են
դպրոցական պիտույքներ, շենքեր և այլն, գյուղի
դպրոցի բարձր խմբերում սովորող պիտոներներից
նշանակվում են խմբակների ղեկավարներ և ղեկա-

վարի ոգնականներ: Բրիգադն այս ղեկավար պի-
տոներներին անց է կացնում կուրսերից, ոգնության
կանչելով ուսուցչին: Կուրսերից հետո դպրոցի
նախապատրաստական խմբակները սկսում են աշ-
խատել: Նշվում են հետագա աշխատանքի խնդիր-
ները և բրիգադը մեկնում է:

Այս բրիգադի որինակով մենք տեսնում ենք,
վոր նա իր վրա չվերցրեց ամբողջ աշխատանքը,
այլ կազմակերպեց այն կոլեկտիվի, ողակների և
մանկակտիվի առանձին խմբերի միջոցով, ինքը
դառնալով կազմակերպիչ, ոգնական և առաջ մղող:
Խմբակների ղեկավարման համար, վորպես ամենա-
լուրջ աշխատանքի, բրիգադը պատրաստում է ակ-
տիվը կուրսերի միջոցով:

Այսպես ուրեմն, բրիգադը գնում է գյուղ, կազ-
մակերպում է կոնկրետ աշխատանքը, ոգնում է աշ-
խատանքի սուսչին քայլերում, մանկական ակտի-
վից պատրաստում է աշխատանքի կազմակերպիչ-
ներ, տալիս է խորհուրդներ, քե ինչպես շարունա-
կել աշխատանքը և միայն դրանից հետո մեկնում է:

ՆԱԽԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային կոլեկտիվը կամ դպրոցը գյուղա-
կան կոլեկտիվին և դպրոցին ոգնում է վոր միայն
բրիգադի, այլև նամակազրույցի, մշտական կապ
պահելու միջոցով:

Սակայն նամակազրույցունը կարող է տարբեր
լինել: Յեթե միայն վորջույններ են փոխանակում,
կամ գրում են այն մասին, թե «գտման շնորհիվ

ապահովված է Համաշխարհային Հոկտեմբերի հաղթանակը» և այլն, ապա նման նամակագրությունը հաղթիվ թե ոգտակար լինի: Գյուղի յերեսաների հետ հաստատված կապը պետք է կրի կոնկրետ բնույթ՝ նրանց իրական ոգնություն ցույց տալու տեսակետից:

Քաղաքային կոլեկտիվի խորհրդի նախագահը պետք է գրավոր կապ պահպանի գյուղական կոլեկտիվի նախագահի հետ, ողակավարներն իրար հետ, քաղաքի կոլեկտիվի պատի թերթի խմբիչը գյուղական պատի թերթի խմբիչի հետ և այլն:

Նամակագրությունը չպետք է ընդհանուր բնույթ վերի, պետք է տալ խորհուրդներ աշխատանքի վերաբերմամբ, փոխանակել փորձը, նյութեր (որագրեր, պատի թերթեր, աշխատանքի պլան և այլն): Քաղաքային պիոներական ողակի ողակավարը թող պատմի գյուղական ողակավարին, թե ինչպես է կազմակերպում հավաքը, ինչպես է բաժանում աշխատանքն ողակում, ողակն ինչպես է ընտրում աշխատանքը և այլն: Քաղաքի ողակավարը պետք է ողնի գյուղական ողակավարին, ավելի լավ կազմակերպելու ողակի աշխատանքը և ազատ ժամերը: Քաղաքի կոլեկտիվի նախագահը պետք է ողնի գյուղական կոլեկտիվի նախագահին կազմակերպել խորհրդի աշխատանքը, ավելի լավ անցկացնել կոլեկտիվների հավաքները և կոլեկտիվի ամբողջ աշխատանքը:

Շեֆարհյալ գյուղի մանկական ակտիվի հետ տարված ամբողջ աշխատանքում քաղաքի կոլեկ-

տիվը պետք է հիշի, վոր այդ ակտիվը պետք է ամենեւեւ և պատրաստել ամենից առաջ բատրակների և չքավորների յերեսաներից:

★

Դպրոցը, գիրքը, թերթը, ռադիոն, հրապարակը, գրադարանը, արհեստանոցները, մանկական սենյակները, մանկական թատրոնը, երեկոսիրաները—այս բոլորը յերեսաների կոմունիստական դաստիարակության ազդու միջոցներն են: Նրանք լայնացնում են գյուղի յերեսաների մտավոր հորիզոնը, լուսաբանում են չրջապատող կյանքի յերևույթները, կազմակերպում են նրանց մասնակցելու գյուղի տնտեսական և կուլտուրական շինարարությանը:

Բայց... գյուղում մանկական գրքեր չատ քիչ կան, չատ փոքր է գրադարանների, հրապարակների, սենյակների ցանցը: Գյուղում պակասում են պիտույքներ, նյութեր արհեստանոցների համար, յերեսաների գեղարվեստական սպասարկման համար: Գյուղի պիոներական կոլեկտիվում, դպրոցում հաճախ թուղթ չի ճարվում պատի թերթի համար, չկան ռադիո, կինո-սպասարկում և այլն:

Քաղաքի կոլեկտիվները և դպրոցները պետք է ողնեն իրենց շեֆարհյալներին, մատակարարելով ինվենտար, նյութեր, սարքավորում հրապարակների, սենյակների, արհեստանոցների համար, գրեկական պիտույքներ, ռադիո ընդունիչ, չրջիկ կինո, կազմակերպելով երեկոսիրաներ և այլ կոնկրետ ձեռնարկումներ:

Շատ կազմակերպութիւնների չեֆական աշխատանքի փորձը ցույց ե տալիս, վոր այստեղ պիտոներենքը կարող են հսկայական աշխատանք կատարել:

Ի՞նչ և ի՞նչպես անել: Ինչո՞ւ կարող ե ոգնել քաղաքը:

Կազմակերպեցե՛ք մանկական գրադարան, շրջիկ գրադարաններ դաշտային աշխատանքների ժամանակ:

Ողակը, կոլեկտիվը, դպրոցական խմբակը կամ կոլեկտիվը դպրոցի հետ միասին կազմակերպում են փոքրիկ գրադարան չեֆարկյալների համար: Պիտներներից, դպրոցականներից հավաքում են գրքեր, գրքեր են վերցնում դպրոցի, կոլեկտիվի գրադարանից, պայմանավորվում են բանվորական աղումբի գրադարանի հետ, վորպեսզի նա հատկացնի գրականութիւն, դրամ են հավաքում (հանգանակութիւն, վիճակախաղ, հատկացումներ չեֆական ընկերութեան բլիշից, պրոֆմիտութեան, բնակընկերութեան, կոոպերատիվի կուլտհանձնաժողովից և այլն): Գրքերից և հավաքված միջոցներից կազմում են գրադարանային ֆոնդ—սարքում են գրադարան, գրքերի արձանագրութեան տետրեր, կազմում են հանձնարարված գրքերի ցուցակներ, պլակատներ, շինում են արկղներ շրջիկ գրադարանների համար, պայուսակներ են կարում գիրք բաժանողների համար:

Յերբ ամեն ինչ պատրաստ ե, չեֆերի ներկայացուցիչները խումբը մեկնում ե գյուղ: Շեֆարկյալների հետ միասին սենյակ են ընտրում գրա-

դարանի համար, յեթե կոլեկտիվը սենյակ ունի, գրադարանը կազմակերպում են կոլեկտիվում (գրանով անկազմակերպ յերեխաները և դպրոցականները կհավաքվեն կոլեկտիվի շուրջը), իսկ յեթե կոլեկտիվը սենյակ չունի, գրադարանը կազմակերպում են դպրոցում, խրճիթ—ընթերցարանում կամ գյուղխորհրդի կողմից հատկացված սենյակում: Ինքնաձեռն գրադարանը լրացնում են կոլեկտիվի, դպրոցի, առանձին պիտներների և դպրոցականների գրքերով: Ստեղծում են գրադարանային խորհուրդ, ընտրելով կոլեկտիվի, դպրոցական խմբակների և անկազմակերպ յերեխաների ժողովներում: Խորհուրդը վորոշում ե գրադարանի աշխատանքի կարգը, սահմանում ե այն կետերը, ուր գնալու յեն շրջիկ գրադարանները, ընտրում ե գրադարանային աղումբի խումբ (պիտներներից, դպրոցականներից և անկազմակերպ յերեխաներից), վորպես գիրք բաժանողներ, կարդացողներ, թերթերի, ժուրնալների բաժանորդագրութիւն և գրքի գնման լիազորներ և այլն:

Գրադարանային խորհուրդը սահմանում ե հերթապահութիւն գրադարանում գիրք տալու համար, իր անդամներին ուղարկում ե շրջիկ գրադարանների հետ, միջոցներ ե հավաքում նոր գրքերի համար, մի խոսքով կառավարում ե գրադարանը:

Շեֆերը գրադարանային խորհրդի աշխատանքին ոգնելու համար ներգրավում են ուսուցիչներին, խրճիթվարներին, անգրադիտութեան վերացնողներին:

Շեֆերն իրենց աշխատանքն ավարտած կարող

եմ համարել միայն այն ժամանակ, յերբ գրադարանը կ'սկսի աշխատել առանց իրենց ոգնութեան:

Կարելի չէ նույն ձևով կազմակերպել նաև մի շարք այլ ձեռնարկումներ:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑԵՔ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՎԵՏԱՐՈՎ, ՆՅՈՒԹԵՐՈՎ, ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ, ԳՐԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒՅՔՆԵՐՈՎ ՅԵՎ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՎ

Գյուղական կոլեկտիվներում և դպրոցներում համարյա չկան աշխատանոցներ, գործիքներ, նյութեր արհեստանոցային և տեխնիկական աշխատանքի համար:

Դպրոցներում դրեթե չկան դիտողական առարկաներ, գործիքներ և պարագաներ փորձերի համար, պլակատներ, սխեմաներ, դիագրամներ, մակետներ: Նույնիսկ դասագրքեր պակասում են: Կոլեկտիվները, դպրոցները չունեն խաղի պարագաներ, յերաժշտական գործիքներ և այլն:

Քաղաքի պիոներները և դպրոցականներն այս կողմից պետք է ոգնեն իրենց շեֆարկյալներին: Նրանք պետք է կազմակերպեն նյութերի, գործիքների, ինվենտարի ուղարկման գործը:

Ուսումնական տարին սկսվելուց առաջ ուղարկել տետրակներ, մատիտներ, դասագրքեր, դիտողական առարկաներ, մայիսի 1-ի առթիվ ուղարկել գրականութուն, պիոներական հրապարակ սարքելու համար անհրաժեշտ նյութեր և այլն:

Ներքևում տալիս ենք այն նյութերի ցուցակը, Վոր շեֆերը ուղարկելու յեն դյուղ:

Յ Ո Ւ Յ Ա Կ Ն 1

(Ամառային կուլտուր-մասսայական աշխատանքի համար)

1. Ֆուտբոլի գնդակ	1
2. Փոքր գնդակներ	3
3. խաղի շկարագրող գիրք	1
4. Յերգարան	1
5. «Խարույկի մոտ» պատմվածքների գիրք	20
6. Վրան գիշերելու համար	1

Յ Ո Ւ Յ Ա Կ Ն 2

(Զմեռային կուլտուր-մասսայական աշխատանքի համար)

1. Զմեռչկներ (КОНЫКИ) զանազան չափերի	10 դուլդ
2. Դահուկներ (ЛЫЖЫ)	10 »

Յ Ո Ւ Յ Ա Կ Ն 3

1. Դրադարան	30—50 գիրք
-----------------------	------------

Յ Ո Ւ Յ Ա Կ Ն 4

(Դպրոցական պարաօմունքների համար)

1. Տետրեր	100 հատ
2. Մատիտներ	100 »
3. «Յերկրագունդ»	1 »
4. Քարտեզներ	3 »
5. Մաքր ֆիզիկայի փորձերի համար	2 »
6. Դասագրքեր խաղերի համար	50 »

Յ ՈՒՑ Ա Կ Ա 5

(Պատի թերթի խմբակուի համար)

1. Թուղթ ալեքսանդրյան	10 թերթ
2. Զրաների	1 տուփ
3. Տ ու շ	5 շիշ
4. Պատկերադարձ ժուրնալ-պլակատներ 10 հատ	
5. Գում-արարիկ	1 շիշ
6. Գրքուլի ինչպես գրել պատի թերթում 1 հատ	
7. Կուլեկտիվի պատի թերթը	1 »

Յ ՈՒՑ Ա Կ Ա 6

(Պոլիտեխնիկական աշխատանքի համար)

1. Ս զ ո ջ	1
2. Փոքր մուրճեր	2
3. Ռանգա	1
4. Շերխիրի	1
5. Կացին (թեթև)	1
6. Ծակիչներ (бурав) դանազան	3
7. Փորիչ (стамеска)	1
8. Դուր (долото)	1
9. Շրջանակավոր սղոց (лобзик)	1
10. Խարաոց	2
11. Վրճիչներ դանազան	3
12. Սեղմիչ (тиски) փոքր	1
13. Ձեռքի սղոց (ножевка)	1
14. Ցերկաթ	1 թերթ
15. Մեխ դանազան	1/2 Կիլո
16. Պտուտակ (շուքուկ)	200 գրամ
17. Պտուտակահան դործիք (отвертка)	1

18. Կազմարարական սեղմիչ	1
19. Դանակ (կոշկակարի)	1
20. Աքցան	1

Սրանք միայն որինակներ են այն նյութերի, վոր կարելի յե ուղարկել չեֆարկյալ պիոներներին և դպրոցականներին: Շեֆերն իրենք պետք ե ընտրեն և պատրաստեն ուղարկվելիք նյութերը:

Յուրաքանչյուր կապոցն ուղարկելիս կուլեկտիվը կամ դպրոցը պետք ե գրի մի նամակ այն մասին, թե ինչպես պետք ե ոգտագործել ուղարկված նյութերը:

Քաղաքի պիոներները և դպրոցականները հանդիսանում են մեծ ուժ վոչ միայն դյուղի յերեխաներին և դպրոցներին ոգնություն ցույց տալու տեսակետից, այլ և նրանք կարող են կատարել խոշոր աշխատանք, անմիջականորեն մասնակցելով դյուղի տնտեսական և կուլտուրական շինարարությանը:

Տեսնենք, թե ի՛նչ կարող են անել պիոներները և դպրոցականներն այդ ասպարեզում: Վերջին տարիներին փորձն ասում ե մեզ, թե ինչպե՛ս և ի՛նչ կարելի յե անել դյուղի տնտեսական և կուլտուրական շինարարության ասպարիզում:

Ահա ինչ են արել քաղաքի պիոներները և դպրոցականները:

«Ուտիլ հումքից ստացված դրամը հանձնվեց կուլեկտիվացման ֆոնդին»:

«Աշխարհի քաղաքի պիոներները և դպրոցա-

կանններն իրենց ուժերով դեկլաանների (չքաղոր
դյուղացիների) համար գնեցին մի տրակտոր և մո-
տակա դյուղում հաստատեցին մի մեծ ռադիոըն-
դունիչ: Վորի համար միջոցները ձեռք բերեցին
վճարովի յերեկույթների և չաբաթորյալների կադ-
մակերպման միջոցով»:

«Բառամանի ռայոնի (Մոսկվա) պիոներական
կազմակերպության կոնֆերանսում կոլեկտիվներն
իրենց առաջին նվերները հանձնում են շեֆարկյալ
Խուզուրուսլանսկի շրջանի կոլտնտեսականների յե-
րեսանների համար: Յերեք որ չարունակ կոնֆե-
րանսն ընդունում եր նվերներ: Նվերների մեջ կա-
յին՝ հնձող մեքենա, ինկուբատոր, ագնվացեղ
ցուլ, յերկու հավ, անգլիական ցեղի աքլոր, ռա-
դիո բարձրախոս, վեց դետեկտորային ռադիոըն-
դունիչներ խողովակներով, դյուղատնտեսական և
առողջապահական գրականութուն, փոքրիկ դե-
ղատներ»:

«Մոնախովսկու կոլյերիտ դպրոցի (Մուրմանի
շրջան) պիոներները և դպրոցականները Չուդ դյու-
ղում կազմակերպեցին մի կոլտնտեսութուն 38
տնտեսութուններից, Մարտյուշեվսկի և Պետրով-
սկի կոլտնտեսութուններում կազմակերպեցին ադ-
րոկուրսեր, ընդգրկելով 40 կոլտնտեսականների:

Դպրոցի ղեկավարութամբ աշխատում են 8
դյուղատնտեսական խմբակներ: Դպրոցականներից
կազմակերպված ե և աշխատում ե սերմերի զտման
9 բրիգադ: Կազմակերպված ե 9 յեռյակներ ագրո-
մինիմում անցկացնելու համար»:

Նման փաստերի թիվը շատ ե, վորոնք ցույց են

տալիս քաղաքի պիոներների և դպրոցականների
կոնկրետ մասնակցութունը դյուղի շինարարու-
թյան գործում, բոլորը թվել անհնար ե:

Պետք ե հաշվի առնել այն խոշոր աշխատանքը,
վոր կատարել են քաղաքի պիոներները և դպրոցա-
կանները հաջամթերումների, դարնանացանի և աշ-
նան դյուղատնտեսական կամպանիաների ժամա-
նակ, կուլտարչավի որերին (գլխավորապես ան-
գրագիտության վերացման ասպարիզում) և այլ
հարվածային աշխատանքների ընթացքում: Միայն
դրանից հետո կարելի յե գաղափար կազմել կա-
տարված աշխատանքի մեծության մասին:

Կանգ չառնելով մանրամասնությունների վրա,
թվենք այն գլխավոր աշխատանքները վոր կարող
են կատարել քաղաքի պիոներները և դպրոցական-
ները դյուղի տնտեսական և կուլտուրական շինա-
րարության ասպարեզում:

ԿՈԼՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐ- ՊՈՒՄԸ ՅԵՎ ԱՄՐԱՅՈՒՄԸ

Դյուղի պիոներական կոլեկտիվի և դպրոցի
հետ միասին տանել ագիտացիոն-բացատրական աշ-
խատանք կոլեկտիվ տնտեսության առավելություն
ների, կոլտնտեսություն մտնելու ոգուտների մա-
սին չքավոր և միջակ դյուղացու համար, ինչպես
և կոլտնտեսությունների տնտեսական-քաղաքական
կազմակերպչական ամրապնդման և կոլտնտեսակա-
նին ունեւոր դարձնելու համար:

Ողնել կուլտակցությանն ու կոմյերիտմիությա-

նը հավաքագրելու կոլտնտեսութեան նոր անդամ-
դամներ: Ոգնել կոլտնտեսութեան տնտեսական
աշխատանքում ցանքի, քաղհանի, բերքահավաքի,
թռչնաբուծութեան, անասնապահութեան և տնտե-
սութեան այլ ճյուղերի կոլտնտեսական կազմա-
կերպման:

Ոգնել գյուղմեքենաների և ինվենտարի նո-
րոգմանը:

Ոգնել սոցմրցման կիրառմանը, հաշվի առնել
սոցմրցման պայմանագրերում ընդունված ցուցա-
նիշների կատարումը, յուրաքանչյուր մրցող բրի-
գադի աշխատանքի արդյունքներն արագ հասցնել
բոլոր կոլտնտեսականներին, բաց թողնել բյուլե-
տեններ, թերթեր, մրցման տեղեկագրեր, ինֆոր-
մացիա ճեղքվածքի ժամանակ:

Պայքարել կոլտնտեսութեան աշխատանքների
պլանների կատարման համար—ընդգեմ գործա-
լքումների, անտնտեսավարութեան (թեթև հեծե-
լազորի խմբի միջով, հետազոտություններ, վերա-
հսկողություն աշխատանքի պրոցեսում, պատի
թերթի, կոլտնտեսական մամուլի միջոցով և այլն):

Ուրիշ կոլտնտեսականների փորձի ոգտագոր-
ծում: Կոլտնտեսական գրականութեան տարածման
միջոցով, թերթերի ընթերցում, եքսկուրսիաներ
դեպի ուրիշ կոլտնտեսություններ:

Պայքար կոլտնտեսությունների մասին տարած-
ված սուտ լուրերի դեմ: Կառավարութեան դեկրետ
ների և վորոշումների հաղորդումը կոլտնտեսական-
ներին: Կազմակերպել դեկրետների, վորոշումների

ընթերցում խրճիթ—ընթերցարաններում, տներում,
կազմել պլակատներ, որինակ—«Կառավարութեան
վորոշումը միասնական գյուղհարկի մասին», «Կոլ-
տնտեսություններին տրված արտոնությունները»
և այլն:

ԿՈՒԼՏՈՒՐ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Անդրագիտութեան վերացումը, լիկկայաննե-
րի ստեղծումը, լիկվիդատորներ (անդրագիտու-
թյուն վերացնողներ) ուղարկելը, լիկկայանի հա-
մար դասագրքեր և այլ պիտույքներ հավաքելը:
Ուսման դիտողական առարկաներ պատրաստելը:

Գրադարանի կազմակերպումը, թերթերի,
գրքերի ընթերցումը խրճիթ—ընթերցարաններում:
Գրքի տարածում, չարժական գրադարանների կազ-
մակերպումը, թերթերի և ժուրնալների բաժանոր-
դագրումը:

Ոգնություն խրճիթ—ընթերցարանների, կար-
միր անկյունների կազմակերպմանը: Նրանց սար-
քավորումը, խմբակների կազմակերպումը, պլա-
կատներ, լոգուններ պատրաստելը խրճիթ—ընթեր-
ցարանի կամ կարմիր անկյան համար:

Ներկայացումներ, կինո նկարների ցուցա-
դրում, մոդական լապտերով զրույցներ կազմա-
կերպելը:

Ռադիոընդունիչներ խրճիթ—ընթերցարանում,
կարմիր անկյունում և ճաշարանում:

Կոլեկտիվացման, առողջապահական լուսավո-

րության, հարբեցողության դեմ պայքարելու մասին ցուցահանդեսներ սարքելը և այլն:

Նքսկուրսիաներ դեպի քաղաք:

Ազրո և զոո-անդրադիտության վերացումը:

Ազրո-զոովետմինիմումի համար կուրսեր, զրույցներ, ընթերցումներ, ցուցահանդեսներ, փորձնական աշխատանք կազմակերպելը:

Ոգնություն հանրակրթական բնույթի յերեկոյան կուրսերի և դպրոցների կազմակերպմանը:

Դյուղի տնտեսական և կուլտուրական շինարարությանն անմիջական մասնակցություն ցույց տալու աշխատանքը պիտի կազմակերպել, նկատի ունենալով տեղական պայմանները: Կոլեկտիվի, ԼԿՅՆՄ ԲՆԻՆԻ, դպրոցի միջոցով պետք ե-իմանալ, թե ինչ բանում ոգնության կարիք ե զգացվում և դրանից հետո ընտրել աշխատանքի այն բնագավառը, վորտեղ պիտի կոլեկտիվի աշխատանքը կարող ե ոգտակար լինել:

Պիտեերական կոլեկտիվը պետք ե կապվի շեֆական ընկերության հետ, վորը կոգնի նրան շեֆարկյալ գյուղի համար աշխատանք ընտրելու գործում:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Ներածություն	3
Շեֆական աշխատանքների խնդիրները	4
Պետք ե ճանաչել գյուղը	7
Անկյուն պատի թերթում	11
Շեֆական անկյուն	12
Շեֆական աշխատանքը	14
Նամակագրություն	22
Կազմակերպիցեք ոգնություն	27
Կոլտնտեսությունների կազմակերպումը և ամրացումը	32
Կուլտուր-մասսայական աշխատանք	34

ՀՀ Ազգային գրադարան



NL0195608

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

380

А. Прохвтаилов
Шефская работа
пионеров
Госиздат—Эривань 1933

ԿԳ
ՏՎ

Հեղինակ Ա. Պրոխվտաիլով
Պատ. խմբագիր Ս. Սարգսյան
Տեխ. խմբագիր Դ. Զենյան
Թարգմանիչ Վ. Թերզիբաջյան
Սրբազրեց՝ Վ. Նաչատրյան

Հանձնված և արտադրության 13 հունիսի 1933 թ.

Ստորագրված և տպագրելու 13 հուլիսի 1933 թ.

Դրվագ 8198 (բ). Հրատարակ. № 2627. 50688 տպ. նշ.

Պետհրատի տպարան. Պատվեր 1510. Ցիքած 1000: